600.0363.14.10.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 հոկտեմբերի 2020 թվականի №363Ն
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի N308Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2008 թվականի հունիսի 6-ի «Էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգը հաստատելու մասին» N 308Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման կարգի՝

1) 1-ին կետում «2-17» թվերից հետո լրացնել «,2-18, 2-19» թվերը.
2) 1.1 կետում «բաշխման,» բառից հետո լրացնել «մատակարարման» բառը.
3) 2-րդ կետի 1-ին ենթակետում «,2-11» թվերից հետո լրացնել «,2-19» թվերը.
4) 4-րդ ենթակետում «2-15» թվերից հետո լրացնել «,2-18» թվերը, իսկ «ձևով» բառը փոխարինել «ձևերով» բառով.

5) 3-րդ կետում «փոքր հիդրոէլեկտրակայաններում» բառերը փոխարինել «էլեկտրակայաններում» բառով, իսկ «փոքր հիդրոէլեկտրակայանի» բառերը՝ «էլեկտրակայանի» բառով .

6) N1 հավելվածի աղյուսակի 7-րդ, 8-րդ, 12-րդ և 13-րդ կետերում և 10-րդ սյունակի վերնագրում «բաշխման» բառից հետո լրացնել «(երաշխավորված մատակարարման)» բառերը.

7) N1 հավելվածի աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ և 17-րդ կետերով.

16.	Տեղեկատվություն սակագների հաշվարկում ներառված Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի սպասարկման և մարման, ինչպես նաև «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար՝ վառելիքային, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար՝ նորոգման ծախսերի մասին (Հավելված N2, Ձև 2-18)	●	-	●	●	●	●	●	-	-	-
17.	Տեղեկատվություն ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների սկզբնական և հաշվեկշռային արժեքների մասին (Հավելված N2, Ձև 2-19)	-	-	-	-	-	-	-	●	-	-

8) N1 հավելվածը՝ աղյուսակից հետո, լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով.

«3. 16-րդ կետում նշված տեղեկատվությունը (Ձև 2-18) ներկայացնում են այն ընկերությունները, որոնց սակագների հաշվարկում ներառված են Հայաստանի Հանրապետության կառավարությունից կամ Հայաստանի Հանրապետության կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի սպասարկման և մարման ծախսեր՝ այդպիսի վարկերի սպասարկման կամ մարման 1-ին վճարման եռամսյակից սկսած:».

9) N2 հավելվածի՝ 2-1 ձևի աղյուսակի 8-րդ, 2-2 ձևի աղյուսակի 5-րդ, 2-3 ձևի աղյուսակի 7-րդ, 2-4 ձևի աղյուսակի 7-րդ կետերում «բաշխման» բառը փոխարինել «մատակարարման (այդ թվում՝ երաշխավորված մատակարարման) և էլեկտրական էներգիայի մեծածախ առևտրի» բառերով, իսկ 2-5 ձևի աղյուսակի 1.1 և 4-րդ կետերում՝ «մատակարարման (այդ թվում՝ երաշխավորված մատակարարի)» բառերով.

10) N2 հավելվածի՝

ա. 2-2 ձևի աղյուսակի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ և լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին և 2.2-րդ կետերով.

«

2.	Էլեկտրական էներգիայի օգտակար առաքումը (տ.1-(տ.3.1+տ4.1)), այդ թվում՝	հազ. կՎտժ									
2.1	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը										
2.2	Այլ անձանց										

»,

բ. 2-2 ձևը՝ աղյուսակից հետո, լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ կետով.

«2. Սույն ձևի 5-րդ կետով սահմանված էլեկտրական էներգիան մեկից ավելի սակագներով ձեռք բերելու դեպքում ներկայացվում է ըստ այդ սակագների (ներառյալ ավելացված արժեքի հարկը)՝ առանձին տողերով:».

11) N2 հավելվածի 2-5 ձևի աղյուսակի՝

ա. 1.1.5 կետում «Որոտանի ՀԷԿՀ» բառերը փոխարինել «ՔոնթուրԳլոբալ Հիդրոկասկադ» բառերով.

բ. 1.1.6 կետում «Ձորա ՀԷԿ» փակ բաժնետիրական ընկերությունից» բառերը փոխարինել «30 ՄՎտ և ավելի հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների կիրառմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից, այդ թվում՝» բառերով.

գ. 1.1.7 կետում «վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ աշխատող կայաններից, ընդամենը, այդ թվում՝» բառերը փոխարինել «այլ աղբյուրներից» բառերով.

դ. 1.1.5.1, 1.1.7.1, 1.1.7.2, 1.1.7.2.1, 1.1.8, 1.1.8.1 կետերն ուժը կորցրած ճանաչել.

12) N2 հավելվածի 2-6 ձևի աղյուսակի՝

ա. 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում «փոքր հիդրոէլեկտրակայաններից» բառերը փոխարինել «մինչև 30 ՄՎտ հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ աշխատող կայաններից» բառերով.

բ. 4-րդ կետի 1-4-րդ ենթակետերի «բ» պարբերություններում «հաշվառքի» բառերից հետո լրացնել «սարքի» բառերը.

գ. 5-9-րդ կետերում «վաճառքը» բառը փոխարինել «առաքումը» բառով.

դ. 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

20.	Ընդամենը սպառիչների (հաշվիչների) քանակը, այդ թվում՝	հատ		
1)	110 կՎ լարման ցանցերից սնվող	-"-		
ա.	*Ինդուկցիոն հաշվիչներ*	-"-		
բ.	*Էլեկտրոնային հաշվիչներ՝ առանց էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգին միացման*	-"-		
գ.	*Էլեկտրոնային հաշվիչներ՝ էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգին միացման հնարավորություն ունեցող*	-"-		
2)	35 կՎ լարման ցանցերից սնվող	-"-		
ա.	*Ինդուկցիոն հաշվիչներ*	-"-		
բ.	*Էլեկտրոնային հաշվիչներ՝ առանց էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգին միացման*	-"-		
գ.	*Էլեկտրոնային հաշվիչներ՝ էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման*	-"-		

	համակարգին միացման հնարավորություն ունեցող			
3)	6 կՎ լարման ցանցերից սնվող	-"-		
ա.	*Ինդուկցիոն հաշվիչներ*	-"-		
բ.	*Էլեկտրոնային հաշվիչներ՝ առանց էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգին միացման*	-"-		
գ.	*Էլեկտրոնային հաշվիչներ՝ էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգին միացման հնարավորություն ունեցող*	-"-		
4)	0.38 կՎ լարման ցանցերից սնվող բնակչության մոտ տեղադրված հաշվիչներ	-"-		
ա.	*Ինդուկցիոն հաշվիչներ*	-"-		
բ.	*Էլեկտրոնային հաշվիչներ՝ առանց էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգին միացման*	-"-		
գ.	*Էլեկտրոնային հաշվիչներ՝ էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգին միացման հնարավորություն ունեցող*	-"-		
5)	0.38 կՎ լարման ցանցերից սնվող այլ սպառողների մոտ տեղադրված հաշվիչներ			
ա.	*Ինդուկցիոն հաշվիչներ*	-"-		
բ.	*Էլեկտրոնային հաշվիչներ՝ առանց էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգին միացման*	-"-		
գ.	*Էլեկտրոնային հաշվիչներ՝ էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգին միացման հնարավորություն ունեցող*	-"-		

».

13) N2 հավելվածի 2-6 ձևի աղյուսակից հետո 3-րդ կետում «սակագները» բառից հետո լրացնել «՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը» բառերը.

14) N2 հավելվածի 2-1, 2-2, 2-3, 2-4, 2-5, 2-6, 2-7, 2-8, 2-9, 2-10, 2-11 ձևերում «Կ.Տ.» բառերից հետո լրացնել «(առկայության դեպքում)» բառերը.

15) N2 հավելվածի 2-7 ձևի N3 աղյուսակի, 2-8, 2-13 ձևերի վերնագրերում «բաշխման» բառից հետո լրացնել «(երաշխավորված մատակարարի)» բառերը.

16) N2 հավելվածի 2-12 ձևը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N1 հավելվածի:

17) N2 հավելվածը լրացնել նոր՝ 2-18 և 2-19 ձևերով՝ համաձայն համապատասխանաբար N2 և N3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
14 հոկտեմբերի 2020թ.